

## Գործարար միջավայրի ուսումնասիրման նպատակով Կոտայքի մարզպետն այցելել է «Սարանիստ» և «Սիփան» ձեռնարկություններ

15.11.2018

Բարենպաստ գործարար միջավայրը ներդրումներ կատարելու և գործարարությամբ զբաղվելու հիմնական խթանն է, և այստեղ մեծ դերակատարում ունի երկրի իշխանությունների (և հիմնականում Կառավարության) կամքը և կառավարման որակը: Այս առումով մարզում զարգացման նոր ուղիների մատնանշումը անհրաժեշտ է սկսել ներկա ռեսուրսների ուսումնասիրությունից:

Ինչպես բազմաթիվ այլ ոլորտներում, գործարար միջավայրը Կոտայքի մարզում լավագույնս պատկերացնելու նպատակով Կոտայքի մարզպետը հարկ է համարում անմիջական այցերի միջոցով հասկանալ ներկա իրավիճակն ու հնարավորությունները:

Այս նպատակով մարզում արտադրության ոլորտում նշանակալի դերակատարում ունեցող գործարար Մելիք Մանուկյանի ուղեկցությամբ Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը երեկ շրջել է «Սարանիստ» ապակետարայի արտադրական ձեռնարկությունում և ներկայումս կառուցման գործընթացում գտնվող կոնյակի գործարանի տարածքում, որտեղ այս պահին իրականացվող շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտին հասցնել 2019 թվականին:

«Կառուցվող գործարանի շենք-շինությունների ճարտարապետությունը տպավորիչ է և իրականացվում է առանձնահատուկ բծախնդրությամբ», -նշեց մարզպետը՝ հավելելով, թե դա թույլ է տալիս ակնկալել, որ մեր մարզում շուտով կունենանք տարածաշրջանում իր տեսակով տարբերվող համալիր, որը կարող է դիտարկվել նաև որպես վայր, որը կներառվի ներգնա տուր-փաթեթներում:

Մեկ այլ այցով մարզպետը եղավ նաև «Սիփան» պահածոների և ոչ ոգելից ըմպելիքների գործարանում: Բազմապրոֆիլ արտադրությունը և արտահանման զգալի ծավալները (70-80%) խոսում են բիզնեսի լավ կառավարման և բարձր որակի մասին: Ոչ ոգելից խմիչքների համար հումք ծառայող մրգերը տեսակավորվում և պահածոյացման էին պատրաստվում տեղում: Հայկական արտադրության այս կոմպոտներն ու պահածոները իրացվում են նաև ռուսաստանյան, եվրոպական, ամերիկյան շուկաներում, ինչպես նաև Ավստրալիայում:

Մարզպետի դիտարկմամբ, աշխատանքային այս այցերը թույլ են տալիս գնահատել մարզի պոտենցիալը բիզնեսի զարգացման և ներդրումային միջավայրի ապահովման տեսակետից, և դրանք շարունակական են լինելու: